## ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

### 2010 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 20-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓՈԽԱԴԱՐՁԱԲԱՐ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 15 փետրվարի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, Վ. Պողոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի օգոստոսի 20-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ առեւտրային ներկայացուցչություններ փոխադարձաբար հիմնադրելու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ սահմանադրական դատարան 2010 թվականի դեկտեմբերի 14-ին մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի 2011 թվականի հունվարի 25-ի 04/15.21/271-11 թվակիր գրությամբ ներկայացված գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ.**

Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ առեւտրային ներկայացուցչություններ փոխադարձաբար հիմնադրելու մասին համաձայնագիրը (այսուհետեւ` համաձայնագիր) ստորագրվել է 2010 թվականի օգոստոսի 20-ին` Երեւանում:

Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո դադարեցնում է իր գործողությունը 1992 թվականի սեպտեմբերի 30-ի` Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ առեւտրական ներկայացուցչությունների փոխադարձ հիմնադրման վերաբերյալ համաձայնագիրը, բացառությամբ 1-ին հոդվածի, համաձայն որի` «Կողմերը մինչեւ 1992 թվականի վերջը փոխադարձաբար երկու պետությունների մայրաքաղաքներում բացում են առեւտրական ներկայացուցչություններ: Կողմերն իրենց երկրների համապատասխան գերատեսչություններին հանձնարարում են անարգել իրականացնել դրա համար անհրաժեշտ ընթացակարգեր»:

Համաձայնագրի նպատակն է զարգացնել երկու պետությունների միջեւ տնտեսական հարաբերությունները համաշխարհային պրակտիկայում ընդունված սկզբունքներով, ապահովել արտաքին տնտեսական հարաբերությունների կարգավորման արդյունավետ ազգային համակարգ եւ լավագույն ձեւով համակարգել արտաքին տնտեսական հարաբերությունները:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- երաշխավորել, որպեսզի 1992 թվականի սեպտեմբերի 30-ի` Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ առեւտրական ներկայացուցչությունների փոխադարձ հիմնադրման վերաբերյալ համաձայնագրի հիման վրա Ռուսաստանի Դաշնության

մայրաքաղաքում հիմնադրված Հայաստանի Հանրապետության առեւտրային ներկայացուցչությունը գործի համաձայնագրի դրույթներին համապատասխան,

- ապահովել, որպեսզի առեւտրային ներկայացուցչությունը կատարի համաձայնագրով ամրագրված հետեւյալ հիմնական գործառույթները՝ աջակցել երկու պետությունների միջեւ առեւտրատնտեսական կապերի զարգացմանը, Ռուսաստանի Դաշնությունում ներկայացնել Հայաստանի Հանրապետության շահերն այն հարցերով, որոնք վերաբերում են երկու պետությունների միջեւ առեւտրին եւ տնտեսական համագործակցության այլ ձեւերին, տեղեկացնել Ռուսաստանի Դաշնության շահագրգիռ մարմիններին Հայաստանի Հանրապետությունում տնտեսական պայմանների եւ արտաքին տնտեսական գործունեության ոլորտը կարգավորող օրենսդրության մասին, ինչպես նաեւ ՀՀ պետական մարմիններին տրամադրել նման տեղեկատվություն Ռուսաստանի Դաշնության վերաբերյալ, նպաստել ֆիզիկական եւ իրավաբանական անձանց մասնակցությանը Հայաստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում կազմակերպվող միջազգային առեւտրական եւ արդյունաբերական ցուցահանդեսներին եւ համակարգել իր պետության մասնակիցների աշխատանքը, աջակցել Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության ֆիզիկական եւ իրավաբանական անձանց առեւտրի, տնտեսական եւ գիտատեխնիկական համագործակցության ոլորտում միմյանց միջեւ գործարքներ իրականացնելու, ուղղակի տնտեսական կապեր հաստատելու, արտադրական փոխգործակցություն իրականացնելու, համատեղ ձեռնարկություններ ստեղծելու գործում եւ տնտեսական գործունեության հնարավոր այլ ձեւերի զարգացման գործում,
- երաշխավորել, որ առեւտրային ներկայացուցչության ղեկավարն ու նրա տեղակալները, ինչպես նաեւ վարչատեխնիկական ու սպասարկող անձնակազմի անդամներն օգտվեն այն բոլոր արտոնություններից եւ անձեռնմխելիության իրավունքից, որոնք ՄԱԿ-ի 1961 թվականի ապրիլի 18-ի՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) համաձայն տարածվում են դիվանագիտական գործակալների վրա կամ տրվում են դիվանագիտական առաքելությունների անձնակազմի համապատասխան աշխատակիցներին,

- ապահովել, որպեսզի առեւտրային ներկայացուցչության շինություն-ների, գույքի, արխիվների, փաստաթղթերի, պաշտոնական նամակագրության համար գործեն այն բոլոր արտոնությունները եւ անձեռնմխելիությունը, որոնք Վիեննայի կոնվենցիայի պահանջներին համապատասխան կիրառվում են դիվանագիտական ներկայացուցչությունների շինությունների, գույքի, արխիվների, փաստաթղթերի, պաշտոնական նամակագրության նկատմամբ,
- հնարավորության սահմաններում աջակցել Ռուսաստանի Դաշնության առեւտրային ներկայացուցչության համար Հայաստանի Հանրապետության տարածքում անհրաժեշտ շինություններ տրամադրելու գործում՝ օրենսդրությանը համապատասխան,
- երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության այլ քաղաքներում կարող են բացվել նաեւ Ռուսաստանի Դաշնության առեւտրային ներկայացուցչության բաժանմունքներ:

Համաձայնագրով նախատեսվում է, որ առեւտրային ներկայացուցչություններն օգտվում են իրավաբանական անձանց իրավունքներից, գործում են իրենց պետության կառավարության անունից եւ ընդունող պետությունում իրենց պետության դեսպանի անմիջական քաղաքական ղեկավարության ներքո եւ պատասխանատվություն չեն կրում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց պարտավորությունների համար:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորու-թյունները բխում են միջազգային փոխշահավետ համագործակցության հաստատման վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 9-րդ հոդվածով ամրագրված սկզբունքներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հան-րապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 եւ 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրա-պետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. 2010 թվականի օգոստոսի 20-ին Երեւանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ առեւտրային ներկայացուցչություններ փոխադարձաբար հիմնադրելու մասին

համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

15 փետրվարի 2011 թվականի
ՍԴՈ-940